

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն №)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՇՈՒՇԻԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մասնաճյուղը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ.-ի օգոստոսի 7-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» Ստեփանակերտ քաղաքում «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղ ստեղծելու մասին №871-Ն որոշմամբ և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ.-ի հունիսի 14-ի №872-Ն որոշմամբ հիմնադրամի վերակազմակերպված համալսարանի առանձնացված ստորաբաժանումը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ստեփանակերտի մասնաճյուղ» անվամբ (այսուհետ՝ Մասնաճյուղ):
2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Շուշիի մասնաճյուղը իրավաբանական անձ չէ, և համալսարանի անունից լիազորված է իրականացնելու գործունեություն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի և սույն կանոնադրություններով:
3. Մասնաճյուղն որպես համալսարանի կառուցվածքային առանձնացված ստորաբաժանում, ունի իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք այլ վավերապայմաններ:
4. Համալսարանի և մասնաճյուղի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, համալսարանի և սույն կանոնադրություններով: Մասնաճյուղի կանոնադրությունը հաստատվում է

համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ համաձայնեցված Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության հետ:

5. Մասնաճյուղի անվանումն է.

հայերեն լրիվ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմանդրամի Շուշիի մասնաճյուղ

հայերեն կարճ՝ ՀԱԱՀ-ի Շուշիի մասնաճյուղ

Ռուսերեն լրիվ՝ Шушинский филиал фонда „Национальный аграрный университет Армении,,

Ռուսերեն կարճ՝ ШФ Фонда НАУА

անգլերեն լրիվ՝ Shushi Branch of „Armenian National Agrarian Universiti” Foundation

անգլերեն կարճ՝ SHB ANAU Foundation

1. Մասնաճյուղի գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն ք. Շուշի, Ա.Բեկորի, 4:

II. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Մասնաճյուղի հիմանական նպատակներն ու խնդիրներն են.

ա) Համալսարանի կրթական ծրագրերով բարձրագույն բակալավրային, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի և միջին մասնագիտական կրթությամբ որոկյալ մասնագետների պատրաստումը և որոկավորման բարձրացումը ազրոկենսաբանական, տեխնոլոգիական (գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի), ազրարային ճարտարագիտական և ազրարային տնտեսագիտական մասնագիտությունների գծով.

Մասնաճյուղի և միջին մասնագիտական և բակալավրային մակարդակներում ուսուցումը կազմակերպվում է առկա, հեռակա, հեռավար և դրսեկություն ուսուցման ձևերով:

բ) Համալսարանի գիտախորհրդատվական ծրագրերի շրջանակներում գյուղատնտեսական, տեխնոլոգիական

գ) ուսումնամեթոդական և գիտական գրականության ստեղծումն ու հրատարակումը, գիտելիքների տարածումը:

3. Իր առջև դրված խնդիրներին համապատասխան մասնաճյուղը իրավասու է՝

- ա) Համալսարանի հոգաբարձուների խորհրդին և ռեկտորին առաջարկություններ ներկայացնել մասնաճյուղի կառուցվածքի, Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման և կառավարման համակարգի մասին, ինչպես նաև մշակել և սույն կանոնադրության 14-րդ կետի «ա» ենթակետով սահմանված ընթացակարգով համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել մասնաճյուղի կանոնադրությունը կամ դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:
- բ) Համալսարանի կանոնադրության համաձայն մասնակցել համալսարանի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և մեթոդական գրականության մշակմանը:
- գ) գիտամանկավարժական գործունեության ասպարեզում ակնառու նվաճումների համար թեկնածություններ ներկայացնել համալսարանի գիտխորհրդին համալսարանի պատվավոր կոչումների, մրցանակների, հուշամեդալների և այլ խրախուսումների համար, առաջարկություն ներկայացնել ուսանողներին անվանական կրթաթոշակների սահմանման և հատկացման վերաբերյալ:
- դ) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված նախահաշվի և մասնաճյուղի ենթանախահաշվի համաձայն տնօրինել սույն կանոնադրության 35-րդ կետով նախատեսված ֆինանսական միջոցները:
- ե) ստեղծել մարզաառողջարարական բազաներ, սննդի և այլ կենցաղային օբյեկտներ:
- զ) Տեղի բանկային հիմնարկությունում բացել ընթացիկ բանկային հաշիվ:
- է) Համալսարանի լիազորությամբ սահմանված կարգով կնքել պայամանագրեր:
- ը) Օգտագործման նպատակով, սահմանված կարգով ձեռք բերել գույք և սարքավորումներ:
- թ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կազմակերպել ուսանողների ընդունելություն:
- ժ) Իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները:
- 1) բարձրագույն և միջին մասնագիտական կրթության կազմակերպում,
 - 2) գիտաուսումնամանկավարժական կադրերի պատրաստում, մասնագետների վերապատրաստում և որակական բարձրացում,
 - 3) գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

- 4) գյուղատնտեսական ուսումնափորձնական տնտեսությունների կազմակերպում և ստացած արտադրանքների իրականացում,
- 5) հրատարակչական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում,
- 6) ուսանողների հասարակական սննդի կազմակերպում,
- 7) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,
- 8) հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի կազմակերպում և սպասարկում,
- 9) ուսանողների և աշխատողների հանգստի կազմակերպում,
- 10) խորհրդատվական ծառայության իրականացում

4. Մասնաճյուղը պարտավոր է՝

- ա) Գործել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև համալսարանի և մասնաճյուղի կանոնադրություններին և ներքին իրավական ակտերին համապատասխան:
- բ) Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով վարել գործավարություն, հաշվապահական հաշվառում, տեղեկություններ և համապատասխան հաշվետվություններ ներկայացնել իրավասու մարմիններին:
- գ) Ապահովել աշխատողների աշխատանքի և հանգստի նորմալ պայմաններ:
- դ) Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:
- ե) Ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը:

5. Մասնաճյուղի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

III ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6. Մասնաճյուղի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
Համալսարանը մասնաճյուղի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված ուսումնամեթոդական հարցերի համակարգման ու կառավարման իր գործառնություններն իրականացնում է համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնի միջոցով:

7. Մասնաճյուղի կառավարման մարմիններն են մասնաճյուղի գիտամեթոդական խորհուրդը, տնօրինության խորհուրդը և տնօրենը:
8. Մասնաճյուղի գիտամեթոդական խորհուրդը մասնաճյուղի տնօրենի նախագահությամբ գործող ուսումնական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գիտաարտադրական գործունեությունը համակարգող և կարգավորող կառավարման մարմին է: Գիտամեթոդական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտամեթոդական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:
9. Մասնաճյուղի գիտամեթոդական խորհուրդը.
- ա) մշակում է Լեռնային Ղարաբաղի Կրթության և գիտության նախարարության հետ համաձայնեցված համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում մասնաճյուղի կանոնադրությունը, առաջարկություններ է ներկայացնում դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման վերաբերյալ,
 - բ) տնօրենի ներկայացմամբ հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և գործավարության կանոնները,
 - գ) մշակում է մասնաճյուղի զարգացման, ինչպես նաև միջազգային համագործակցության գլխավոր ուղղությունները և ներկայացնում է համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը,
 - դ) Համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ստեղծման, ուսումնական պլանների և նրանց փոփոխությունների վերաբերյալ,
 - ե) քննարկում է մասնաճյուղի գիտական գործունեության հիմնական ուղղությունները, լսում հաղորդումներ կատարվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների արդյունքների մասին և համապատասխան առաջարկություններ ներկայացնում համալսարանի գիտական խորհրդին,
 - զ) համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը սահմանված կարգով համալրելու, որակավորման աստիճան և համալսարանի պատվավոր կոչումներ ու մրցանակներ շնորհելու և անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին,

է) քննարկում է մասնաճյուղի տարեկան գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը, որը համալսարանի տարեկան հաշվետվության հետ համատեղ ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը և հոգաբարձուների խորհրդի հաստատմանը,

ը) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող և ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

10. Պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է մրցույթային կարգով: Մրցույթը հայտարարվում է մասնաճյուղի տնօրինության առաջարկով: Մրցույթն իրականացվում է համալսարանի գիտական խորհրդում, իսկ մրցույթով անցած անձանց աշխատանքի նշանակվելու հրամանագրումը կատարվում է մասնաճյուղի տնօրենի հրամանով:

11. Մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի անդամների ընդհանուր թվաքանակը չի կարող գերազանցել 21-ից 27-ը:

Գիտամեթոդական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են մասնաճյուղի տնօրենը (նախագահ), փոխտնօրենները, գիտական քարտուղարը, (քարտուղար), ուսումնական մասի վարիչը, դեպարտամենտների վարիչները, գլխավոր հաշվապահը, գրադարանի վարիչը, արհեստակցական կոմիտեի և ուսանողական խորհրդի նախագահները, տնօրենի առաջարկությամբ կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև համալսարանի ներկայացուցիչները ի պաշտոնե թվակազմի 15% չափով: Նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտամեթոդական խորհրդի անդամների թվակազմի 50 %-ը: Գիտամեթոդական խորհրդի անդամների 25%-ը պետք է լինեն մասնաճյուղի ուսանողներ: Գիտամեթոդական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են մասնաճյուղի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տնօրինության կողմից հաստատված թվաքանակներով և կարգով:

Մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի նիստը համարվում է իրավազոր նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Այդ ընթացքում տնօրենի և մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը տեղափոխվում է համալսարանի գիտական խորհուրդ, որտեղ դրա

քննարկմանը մասնակցում են նաև մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի անդամները:

Մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի ընդունված որոշումները կենսագործվում են տնօրենի հրամաններով:

12. Մասնաճյուղի տնօրինության խորհուրդը տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որը մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իր կանոնակարգի համաձայն և իրեն ընձեռված լիազորությունների շրջանակներում քննարկվում է մասնաճյուղի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը և ընդունում համապատասխան որոշում: Մասնաճյուղի տնօրինության խորհրդի կազմի մեջ մտնում են մասնաճյուղի տնօրենը, փոխտնօրենները, գիտական քարտուղարը, ուսումնական մասի վարիչը, գլխավոր հաշվապահը, արհեստակցական միության և ուսանողական խորհրդի նախագահները, ստորաբաժանումների վարիչներ: Տնօրինության խորհրդի որոշումները կենսագործվում են տնօրենի հրամաններով:

13. Մասնաճյուղի անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որը համալսարանի կանոնադրության 37-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված կարգով պաշտոնի է նշանակվում ռեկտորի հրամանով հինգ տարի ժամկետով: Տնօրենի (թեկնածուի) տարիքը, ինչպես նաև տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Ռեկտորի և տնօրենի միջև սահմանված կարգով կնքվում է աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով, որով նախատեսվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները համալսարանի հետ և նրա աշխատանքի վարձատրության պայմանները:

15. Մասնաճյուղի տնօրենը՝

ա) կազմակերպում է մասնաճյուղի գործունեությունը և օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն, գործում է մասնաճյուղի անունից, ներկայացնում է նրա շահերը,

- բ) իրեն տրված իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ և կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է ուսանողների և աշխատողների համար,
- գ) արձակում է հրամաններ ուսանողների ընդունելության, ազատման, վերականգնման, տեղափոխության վերաբերյալ,
- դ) ապահովում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի որոշումների և ռեկտորի հրամանների կատարումը,
- ե) կազմակերպում է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
- զ) հրավիրում է մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի, տնօրինության նիստեր և ապահովում դրանց սերտ համագործակցությունը,
- է) համալսարանի լիազորությամբ, համալսարանի անունից կնքվում է պայմանագրեր,
- ը) համալսարանի ռեկտորին առաջարկություն է ներկայացնում փոխտնօրեններին, հաշվապահին և ուսումնական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին աշխատանքի նշանակելու և աշխատանքից ազատելու մասին:
- թ) ըստ բնագավառների կատարում է աշխատանքի բաշխում փոխտնօրենների և մյուս ղեկավար աշխատողների միջև: Իր բացակայության ժամանակ տնօրենի պարտականությունների կատարումը դնում է փոխտնօրեններից մեկի վրա:
- ժ) համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում մասնաճյուղի ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը,
- ի) իրականացնում է մասնաճյուղի ֆունկցիոնալ գործունեությունից բխող Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության օրենսդրությանը, համալսարանի և սույն կանոնադրությանը չհակասող այլ լիազորություններ,
- լ) մասնաճյուղի տնօրենը ի պաշտոնե համալսարանի գիտական խորհրդի անդամ է:

IV. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

16. Մասնաճյուղի կառուցվածքը սահմանվում է մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի առաջարկությամբ և ռեկտորի ներկայացմամբ հաստատվում է համալսարանի կառուցվածքի հետ համատեղ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ: Կառուցվածքային ստորաբաժանումների կազմը և իրավասությունները

որոշվում են համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերով:

17. Մասնաճյուղի գիտամեթոդական խորհուրդը համալսարանի հոգաբարձուների խորհրդին և ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ, մասնաճյուղի կառուցվածքում ֆակուլտետներ, ամբիոններ (սեկտորներ), բաժիններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, ինչպես նաև լուծարելու վերաբերյալ:

18. Մասնաճյուղի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման գլխավոր ստորաբաժանումը ուսումնական ֆակուլտետն է (բաժինը, ամբիոնը, սեկտորը և այլն), որոնք միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող դասախոսներին և հետազոտողներին: Ամբիոնը կարող է լինել նաև համամասնաճյուղային և անմիջականորեն ենթարկվել տնօրերին (փոխտնօրենին): Ֆակուլտետի (բաժնի, ամբիոնի, սեկտորի) իրավասությունը որոշվում է համալսարանի կանոնադրությամբ և համալսարանի ամբիոնի (սեկտորի) օրինակելի կանոնակարգով:

19. Մասնաճյուղի ֆակուլտետը.

1) գործում է իր կանոնադրության հիման վրա: Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնա-օժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքներից, ըստ սահմանված չափանիշների, մշակում է իր հաստիքացուցակը և սահմանված կարգով ներկայացնում հաստատման:

2) ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական, գիտական օժանդակ այլ օղակներից: Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի գիտական խորհուրդը, ղեկանատի խորհուրդը և ղեկանը:

20. Ֆակուլտետի գիտական խորհուրդը քննարկում է ֆակուլտետի կանոնադրությունը և այն ներկայացնում հաստատման, սահմանված կարգով քննարկում և համալսարանի գիտական խորհրդի ընտրությանն է ներկայացնում ղեկանի թեկնածուներին, լսում է ղեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում է նրա գործունեությունը:

21. Ֆակուլտետը ղեկավարում է ֆակուլտետի ղեկանը, իսկ ամբիոնը վարիչը՝ մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդի առաջարկությամբ

Համալսարանի գիտական խորհրդում սահմանված կարգով նրանց ընտրվելուց և համալսարանի ռեկտորի հրամանաով պաշտոնի նշանակվելուց հետո:

22. Ֆակուլտետի ղեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեություն.

2) ապահովում է համալսարանի, մասնաճյուղի և ֆակուլտետի կառավարման մարմինների որոշումների կատարումը:

23. Ֆակուլտետի ղեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի քան երկու հինգամյա ժամկետ անընդմեջ:

24. Ամբիոնները (բաժինները, լաբորատորիանները) ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության և ֆակուլտետների ամբիոնների ու լաբորատորիանների կանոնադրության հիման վրա:

25. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է համալսարանի գիտական խորհրդում, բաց մրցույթի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Ընտրությունների արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում ռեկտորը: Ամբիոնի վարիչի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգին համապատասխան:

26. Մասնաճյուղում միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցումը կազմակերպվում է մասնաճյուղի կազմում միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում, շրջանավարտներին սահմանված կարգով տրվում է միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) և դրա ներդիրը:

27. Մասնաճյուղի ուսումնափորձնական տնտեսությունը՝ ագրարային ուսումնափորձնական կենտրոնն , որը գտնվում է Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասում:

V. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Մասնաճյուղում ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի

կանոնադրության, սույն կանոնադրության և համապատասխան կանոնակարգերի համաձայն:

29. Մասնաճյուղի շրջանավարտների ընդունելությունը համալսարանի մագիստրատուրա կատարվում է բակալավրային համակարգի շրջանավարտների համար սահմանված կարգով:

30. Մասնաճյուղի կրթական և գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝

ա) պետական բյուջեից,

բ) պայմանագրերից գոյացած միջոցներից,

գ) հիմնադրամներից, ներառյալ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումը և այլն,

դ) դրամաշնորհներից և նվիրատվություններից,

ե) սույն կանոնադրության 8-րդ կետի „Ժ“ ենթակետով նախատեսված և օրենքով չարգելված այլ գործունեությունից գոյացած միջոցներից,

զ) գիտական արդյունքների ներդրումից և իրացումից գոյացած միջոցներից:

31. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել մասնաճյուղի կոլեկտիվի անդամները, ինչպես նաև պայմանագրային կարգով հրավիրված մասնագետները:

VI. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

32. Մասնաճյուղի աշխատողներն են՝ դասախոսները, գիտական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական աշխատողները:

33. Մասնաճյուղի ուսանողների և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

34. Մասնաճյուղի ուսանողներն են համարվում բակալավրի, մագիստրոսի և կրտսեր մասնագետի կրթական ծրագրով միջին մասնագիտական կրթություն ստանալու համար մասնաճյուղ ընդունված և հրամանագրված անձինք: Ուսանողների ընդունելությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

35. Մասնաճյուղի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինը մասնաճյուղի ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է

ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի և համալսարանի համապատասխան մարմիններում, քննարկման ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: ուսանողական խորհրդի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է խորհրդի կանոնակարգով: Աշխատողների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են օրենսդրությամբ համալսարանի և մասնաճյուղի կանոնադրություններով:

VII. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

36. Մասնաճյուղի գույքն են կազմում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և համալսարանի կողմից օգտագործման նպատակով տրված հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև մասնաճյուղի գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքը: Մասնաճյուղի գույքը՝ համալսարանի գույքն է:

37. Մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների գոյացման աղբյուրներն են.

- ա)** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և համալսարանի կողմից օգտագործման նպատակով հատկացված գույքը,
- բ)** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից մասնաճյուղին հատկացված միջոցները,
- գ)** միջոցներ, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից
- դ)** Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այլ երկրների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, այլ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները և կտակված գույքը,
- ե)** Համալսարանի անունից (համաձայնությամբ, լիազորությամբ) աշխատանքների կատարումից, ծառայությունների մատուցումից և սույն կանոնադրությամբ նախատեսվող համալսարանի կողմից երաշխավորված այլ տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

38. Մասնաճյուղին գործունեության շրջանակներում բոլոր ֆինանսական գործառնությունները և ծախսերը (աշխատավարձի վճարում, գույքի ձեռք բերում,

տնտեսական գործառնական այլ ծախսեր և վճարումներ) կատարվում են մասնաճյուղի ֆինանսական մուտքերի (ռեսուրսների) և պետբյուջեից մասնաճյուղին հատկացված միջոցների հաշվին: Այդ նպատակով բանկային հիմնարկությունում բացվում է ընթացիկ հաշիվ, որտեղից ստացված գումարները կարող են ծախսվել ըստ համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված նախահաշվի մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար:

39. Մասնաճյուղի տարեկան նախահաշվի նախագիծը, ֆինանսական պլանը, հաստիքներն ու վճարման կարգը կազմում է մասնաճյուղը և համալսարանի ներկայացմամբ հաստատվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության կողմից:
40. Մասնաճյուղը սահմանված կարգով պլանավորում և կազմակերպում է իր տնտեսական գործունեությունը, մատուցում է ծառայություններ, կատարում աշխատանքներ, պատասխանատվություն է կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կարգով կատարելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքները խախտելու համար:
41. Մասնաճյուղը կատարում է սոցիալական, հարկային և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ, որոնց նկատմամբ հսկողությունն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության համապատասխան մարմինների կողմից:
42. Հաշվապահական հաշվառման օրենքին համապատասխան, սահմանված կարգով մասնաճյուղը վարում է հաշվապահական հաշվառում, համապատասխան հաշվետվություն է ներկայացնում տեղական հարկային և կենսաթոշակային համակարգի մարմիններին և հաշվետու է համալսարանին, նրա հաշվետվության և հաշվեկշռի տվյալները մտնում են համալսարանի հաշվետվության և հաշվեկշռի մեջ:
43. Մասնաճյուղին սեփականանության իրավունքով պատկանող և օգտագործման հանձնված գույքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը իրականացվում է սույն կանոնադրության համաձայն:

Մասնաճյուղը պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այդ գույքին պատճառված վնասի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

44. Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

VIII. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

45. Մասնաճյուղի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմավորումն ու լուծարումն կատարվում է օրենսդրությամբ, Համալսարանի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: